

ԳԻՏՆԱԿԱՆ ՀԱՅ ԲԺՒՇԿ ՄԸ

Բժիշկ Աստուէրոյի անասպիւական ու հրաշագործ գիւտերը, խոր հետաքրքրուած թիւն մ'արթնցուցին բժշկական աշխարհի մէջ. ուսկից անցաւ լրագիրներուն և ժողովրդի խաւերուն:

Գեռ այս օրերս ալ մեծ վէճ մը կայ իտալական թերթերուն մէջ, ուր յրի մղիչ չղիւն գիւտին առաջնութիւնը բժիշկէ բը-ծիշկ կ'անցընեն, այդ առթիւ կը յիշուի և հայ բժիշկի մը անունը որ զստծ ըլլայ մղիչ ջիւղ Աստուէրոյէն շատ տարիներ առաջ: Ահա թէ ինչ կ'ըսէ տեղւոյս կածեր-րիկոյ լրագիրը իր Յ Փետրուար թուին մէջ:

«Աստուէրոյի հէքեաթային և ապշեցուցիչ գիւտերը, որուն մասին երկար զբաղեցաւ այս օրերս լրագրութիւնը, առիթ տուին լրագրողներուն և գիտնականներուն վերյիշելու Գէորգ Պայլիւիի անունը, որ թէպէտ հայ անուն չ'երևիր և իտալիոյ մէջ կ'ապրէր, սակայն զուակ էր Հայաստանի:

Երանօթ են այն յարաբերութիւնները որ դարերով կային ընդ մէջ Հայաստանի և իտալիոյ. հայերը իտալական բազմաթիւ քաղաքներու մէջ հարուստ և ծաղկեալ գաղութներ ունէին: Երանօթ է և այն որ անոնցմէ շատերը շատ սիրով կ'ընտրէին բժշկական և վիրհատական մասնաճիւղերը: Պայլիւիի ալ հայերու որդի, թերևս Նարոլիի մօտ Լէքքա քաղաքը ծնած, Բատուայի համալսարանէն բժշկական վը-կայական առնելով իր կեանքն անցուց 1668 և 1707ին մէջ:

Այնքան վառ էր անոր հանճարը և այնքան զարմանալի իր հմտութիւնը, որ թիչ ժամանակի մէջ գիտութեան բարձրագոյն գագաթին հասաւ, և ինքն եղաւ արդի բժիշկներու մէջ առաջինը, որ «Ալկուրկ մը մղիլ չղիկ» գրքովով պաշտպանեց և անպնդուցութե թէ ինչպէս բժշկելու գործն զերմ մարմնոյ հաստատուն մասերուն կը սպասկանի. այնքան ջերմ հաւատացող

եղաւ այս իր դրութեան որ ժամանակակիցներէն հաստատականերու պարագլուխըն համարուեցաւ:

Պայլիւի երբ Հոտ հասնելուն կղեմէս ժԱլիւն ներկայացաւ, քահանայապետը այնքան ազդուեցաւ անոր գիտութենէն, որ թէպէտ շատ երիտասարդ էր, Սարիէնցայի Գարոցին Անդամազնութեան և Վիրհատութեան արժուները իրեն յանձնեց:

Այս հանճարեղ հայ գիտնականին ամենակարճ կեանքը (հազիւ երսունութ տարեկան էր՝ մեռաւ) արգելք չեղաւ իրեն կանխահաս համրաւ մը վաստկելու գիտուններուն մէջ: Այսօր ևս անոր անունը յարգանքով և յատկապէս կը յիշուի այն աղմուկին մէջ զոր խաչագող Աստուէրոն բարձրացուց. մինչդեռ բուն Պայլիւին էր արդի բժիշկներուն մէջ, ժէ դարուն, որ առաջին անգամ գիւտաւոր փորձերով այդ վարդապետութեան գոյութիւնը մատնանշեց:

ԽՄՐ.



ՆՅՏՆ ՈՒ ԵՐԳԸ

Արձակեցի նետ մ'օդին մէջ սրբաթեւ Ան վար ինկաւ, ու չեմ գիտեր ո՞ր գրնաց. Այնքան արագ նա դուրս թռաւ ու թիթեւ Որ մընացին աչքերս հետքին շըւարած:

Նըւազեցի երգ մը կապոյտ եթերին Ան վար ինկաւ, ու չեմ գիտեր ո՞ր գրնաց. Բայց ո՞վ ունի այնքան օտր աչք և նըրբին Որ կարենայ հասնիլ ձայնի թըրօնքին:

Հեռուն, հեռուն կաղնիին մէջ մխրճուած Հուսկ և զըտայ նետը դողող է՝ անխորտակ. Գըտայ նորէն երգիս վանկերը ցառուած Բարիկամիս խորը սըրտին ամրափակ:

(Թրգմ. Յ. ՊԱՍՏՈՒՅԱՆ) ԼոնկՖէլլոյ ձեմեալիկ